



# ՇԱՄԱՆԱԿԸ

Դու ես կերտում քո ժամանակը:  
Համոզված եղիր՝ տարիներ հետո  
Քո կերտած ժամանակը լավն է թվալու...

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

## Միրելի՛ համայնարանական

Ես «Քո ժամանակն» եմ: Ուզում եմ դառնալ քո ընկերը: Խոստանում եմ, որ մեր պրոյեկտը չեն սահմանափակվի միայն համայնարանին վերաբերող թեմաներով: Իմ միջոցով կտեսնես քո ժամանակի հեղափոխիչ մարդկանց, առհասարակ, խոստանում եմ՝ ինձ հետ չես ձանձրանա: Հուսամ՝ սպասված հյուր կլինես:

## ԲԵԿՈՐ 55



### Բեկոր ու Սպարապետ

Վեր կաց, Բեկոր,  
Վեր կաց, հերոս,  
Հերիք է.

Տես, բացակա ես քանի օր:

Վեր կաց, Բեկոր,

Տես, ծնվեց նոր հերոս այսօր

Եվ իր ոգով անվախ

Պահեց մի ողջ Արցախ:

Փամփուշտը կրծքում կանգնեց աներեր,

Պահեց իրեն վատահված դիրքերը մեր,

Նրա ահից մի ամբողջ ոհմակ փախավ հետ,

Փախավ, անհետացավ մահի հետ:

Վեր կաց, Բեկոր...

Բացիր աչքերդ, Սպարապետ...

Տեր ամենագոր, վերադարձու՛ն նրան հետ...

Բացիր աչքերդ, Սպարապետ,

Սաներիդ թիկունք է հարկավոր,

Նրանք սնվել են քո ոգով,

Պաշտպանված են քո հսկող հայացքով,

Պահում են սահմանները նվիրումով,

Թշնամուն պահում են սարսափի մեջ...

Բայց մեզ պետք ես էլի,

Դու հայոց ուժի հայելի...

Ով մեծ Սպարապետ վեր կաց ու կանգնիր

Սաներիդ ու Արմենների թիկունքին աներեր,

Խորտակեք ոհմակները մեր թշնամու:

Վեր կաց, Բեկոր,

Բացիր աչքերդ, Սպարապետ...

Մեզ ոչ միայն ձեր կարոտը,

Այլ հենց դուք, դուք եք պետք...

Արմինե Հովսեփյան  
ԱրՊՀ Հայ գրականություն.  
մազ. 2-րդ կուրս

Այն իմ հայրենիք, իմ ջահել կյանքը  
Քո բախտի համար այնպես գոհեցի,  
Որ դու ինձ սգաս...

Հայրի՛կ, դու չցանկացա՞ր ո՞ւր մի քիչ էլ ապրել, գոնե մեկ անգամ էլ, թեկուզ վիրավոր, բայց իմ ու Դավիթի աչքերի մեջ նկարվելու երազանքով... Հայրենիքն ավելի քան՝ ողբ էր... Շատերի նման դու էլ սովորական արցախցի էիր, որ մտածում էիր քո ժողովրդի, քո ընտանիքի, քո հողի (այն հողի, ուր ծնվել ու մեծանում են քո երեխաները) ու ջրի մասին: Դու երբեք չես վախեցել թշնամուց, բոլորի հետ պարտադիր մարտի դաշտ ես մեկնել և կռվել հանուն քո ժողովրդի: Բայց...

1993թ. հունիսի 12 – ին, երբ ընդամենը մի քանի քայլ էր մնացել հաղթանակին, զոհվեց քո այնքան շատ սիրելի հրամանատարը՝ Սոնթեն, որի գործը շարունակող դարձար դու, նշանակվեցիր դասակի հրամանատար՝ կռվելով միշտ առաջնագծում. բայց դա երկար չտևեց: Դու զոհվեցիր մարտում՝ քեզմից հետո թողնելով մեզ՝ երկու փոքրիկներին, որ կարոտ մնացինք հայրական հոգատարությանը և այդպես էլ չհասկացանք, թե ինչու քեզ այլևս չենք տեսնի... Աղոտ եմ հիշում դեմքը քո, սակայն հարազատների պատմածներով կարծես տեսնում եմ քո լուսե կերպարանքը:

Մի անգամ, ուղղակի դիմելով պատմության ուսուցչիդ, հարցրել ես. «Ինչու՞ է Դարաբաղն Ադրբեջանի կազմում չէ՞ որ այն պատմական Հայաստանի 15 նահանգներից

մեկն է»: Եվ երբ ուսուցիչդ պատմել է ողջ ճշմարտությունը, դու կրճտացրել ես ատամներդ՝ ասելով. «Այսպես մնալ չի կարող»: Երևի հենց այդ օրն էլ որոշվեց ճակատագիրը...

Հայրի՛կ, դու հերոս էիր դեռ ծնվածդ օրից, դու գիտեիր, որ ճակատագիրը քո հանդեպ շատ դաժան պիտի վարվի: Դու բոլորի հուշերում մնացել ես որպես խոհուն ու բանիմաց, չարածնի ու երազկոտ մի երիտասարդ, որ ամեն հաջող մարտից հետո սիրում էր առանձնանալ, նայել երկնքին, փայլող աստղերին ու լուռ երազել: Տեսնես ինչ էիր երազում. այն երտասարդների մասին, ովքեր այլևս չկային, մտքումդ հերթական զեկու՞յցն էիր ներկայացնում սիրելի հրամանատարիդ, թե՞ հիշում էիր քո երկու փոքրիկներին, որոնք ամեն անգամ անմեղ աչիկներով քեզ էին ուղեկցում մարտական առաջադրանքի... Ոչ ոք չգիտի... Դու բազում երազներ ունեիր, սակայն հայրենի երկրի ազատության համար պայքարը քեզ լիովին կլանել էր...

Հայրի՛կ, ուզում եմ ասել, որ հպարտ եմ, որ քո դուստրն եմ... Ուզում եմ ասել, որ դու և բոլոր մեր նահատակները հանգիստ կարող եք մնալ մայր հողի ջերմ գրկում՝ համոզված լինելով, որ Ձեր թափած արյունը իզուր չի կորչի...

Սիրա Ավանեսյան  
ԱրՊՀ լրագրություն  
3-րդ կուրս

## «ՈՒՋՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԱՍ» ԽՈՐԱԳՐՈՎ ՖԻԼՄԻ ԴԻՏՈՒՄՆ ԱՐՊՀ-ՈՒՍ

ԼՂՀ անկախության 23-րդ տարեդարձի առիթով Արցախի մայր բուրջ շարունակում է ռազմաօդային-տարածաօդային ոգու սերմանումը: Սեպտեմբերի 3-ին ԱրՊՀ դահլիճում տեղի ունեցավ Աժ պատգամավոր, ճանաչված լրագրող, հրապարակախոս Վարդգես Բաղդյանի «Ինքնահաստատում» վավերագրական ֆիլմի ցուցադրումը, որը խոսում կարգերով և առանց մեկնաբանության ներկայացնում էր արցախյան տարեգրության պատմությունը՝ ընդգրկելով դարաբաղյան շարժումը մինչև մեր օրերը:

«Ինքնահաստատում» ֆիլմը ստեղծվել է 2006թ-ին՝ ԼՂՀ հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ և այսօր չի կորցրել իր արդիականությունը: Այն մի յուրահատուկ ժողկաթաղ է՝ պատմական անցյալի և ներկայի համադրությամբ:

ԱրՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վ.Յարամիշյանը նշեց, որ սեպտեմբերը նշանակալից ամիս է արցախահայության համար, առանձնապես՝ պետականաշինության առումով: Նա ասաց. «Միջոցառումը իր բովանդակությամբ և ընդգրկումով լուրջ երևույթ է՝ նախորդ միջոցառման տրամաբանական շղթան, որը ներառում է արցախյան շարժումից մինչև մեր օրերը ընկած ժամանակաշրջանը»: Պրոռեկտորը հավելեց, որ մենք բոլորս պարտավոր ենք ոգևորությամբ համալրել միջոցառման մասնակիցների շարքերը: Իսկ Արցախյան գոյամարտի պատմության ականատես

Վ.Բաղդյանի հեղինակած ֆիլմը առաջին կուրսեցիներին դարձրեց տարեգրության դեպքերի ականատես: Նա նշեց, որ յուրաքանչյուր ուսանող, անկախ մասնագիտական ուղղվածությունից, պարտավոր է իմանալ իր պատմությունը՝ ազատամարտի պատմությունը. «Սա նաև հայրենասիրության դաս է: Առանց այն սերտելու հնարավոր չէ դառնալ լավ քաղաքացի, քանզի ամենամեծ մասնագիտությունը հենց հայրենասիրությունն է»: Վավերագրական ֆիլմի հեղինակը հորդորեց ուսանողներին լավ իմանալ սեփական պատմությունը, քանզի ոչ ոք իրավունք չունի խմբագրելու մեր պատմությունը, որն ունի միայն ամբողջական և անաչառ կերպով ներկայացնելու խնդիր: Նա նաև ցավով նշեց, որ գոյապայքարի տարիներին Արցախի հեռուստառադիոընկերության արխիվը ոչնչացվել է: «Թերթելով պատմության էջերը» ֆիլմաշարը խիստ արդիական է ներկայիս երիտասարդության համար: «Ես ցանկանում եմ, որ հենց ձեր միջոցով ծավալվի կենդանի երկխոսություն», - ասաց Վ.Բաղդյանը՝ հույս հայտնելով, որ ծրագիրը շարունակական բնույթ կկրի, և ուսանողները հնարավորություն կունենան ֆիլմից ստացած տպավորություններով, կարծիքներով և հարցադրումներով կիսվել հետագա դասընթացների ընթացքում:

Ֆիլմի ցուցադրությունը կրում է շարունակական բնույթ: Հերթական դիտումները նախատեսվում են ամեն հինգշաբթի ԱրՊՀ դահլիճում:

Անահիտ Հակոբյան  
ՈւՂՀՍՄ, ԳԿ և Լ բաժին



